մատ ենք անում, տեսնում ենք, որ աւելի լաւ է լինում, քան թէ այն ձեւով, որ մենք առաջ սովորել էինք մշակել: Անասունների հիւանդութեան դարմանն էլ է իմանում, անասունների ցեղը ազնուացնելու եղանակն էլ է իմանում: Տեսա՞ք մեր անասունները, ոչ մի տեղ մեր շրջակայքում մեր գիւղի անասունների նմանը չկայ: Անդադար նոր եւ նոր գրքեր է բերել տալիս, կարդում է, ինքը սովորում է, եւ մեզ նոր բաներ է սովորեցնում:

— Ի՞նչ լեզուով են լինում այդ գրքերը:

— Չգիտեմ, այդքանը միայն գիտեմ, որ հայերէն չեն:

Ուրախալի էր լսել այդ բոլորը քահանայի բերանից: Որքա՜ն սխալ պէտք է համարել այն կարծիքը, որ կազմոել է մեր գիւղացիների մասին, թէ նրանք մոլեռանդ են, նախապաշարուած են ուսման դէմ, կամ մինչեւ անգամ թշնամի են ուսման եւ հալածում են ուսուցիչներին: Ովքե՞ր են այդ հալածեալները, ովքե՞ր են գնում գիւղերը, ովքե՞ր են մտնում ժողովրդի մէջ: Ոչ մի օրինաւոր կերպով պատրաստուած մարդ, որ գիւղացուն պիտանի լինէր, եւ ոչ մի բարոյական մարդ, որ գիւղացու աչքում բարի օրինակ դառնար: Քաղաքի ուսեալների մրուրը թափւում է գիւղերի մէջ: Քաղաքի անպիտանը՝ գիւղում իրան պիտանի է համարում եւ յանձն է առնում գիւղացու կրթութեան գործը: Նա իր անբարոյական բարք ու վարքով զզուանք է յարուցանում ոչ միայն դէպի իր անձը, այլ դէպի ուսումը, որ նա տալիս է: Անձնաւորութեան մուրը քսւում է եւ գործի վրայ: Գիւղացին սկսում է խիստ լոգիկապէս դատել. «եթէ ուսումը այդ է, եթէ ուսում առած մարդը այդպէս կը լինի, լաւ է, որ որդիքս չփչացնեմ»... Ցոյց տոեցէ՛ք նրան բարի օրինակ, ցոյց տոեցէք ուսման շօշափելի օգուտները եւ կը տեսնէք, նա կսկսէ սիրել թէ՛ ուսումը, եւ թէ՛ ուսում տոողին: Ես ուրախ էի, որ այդպիսի մի անգնահատելի անձն մեր խօսակցութեան առարկան էր:

Ռեսը բոլորովին այլ կէտից սկսեց գնահատել վարժապետի արժանապատոութիւնները, ասելով.

— Նա որքան շատ ուսում ունի, որքան շատ բան գիտէ, միեւնոյն ժամանակ, շատ քաջ մարդ է: Նա իմանում է լաւ հրացան արձակել եւ մեր երեխաներին եւս սովորեցնում է նշան խփել: Նա իմանում է ծովում լաւ ող տալ եւ մեր երեխաներին եւս սովորեցնում է ջրի հետ այնպէս խաղալ, ինչպէս ցամաքում: Ուրիշ ինչե՛ր չէ սովորեցնում նա. վազել, լայն փոսերի վրայից թռչել, սարերում պատի նման հարթ ժայռերից վեր բարձրանալ, քարի կամ երկաթի ծանր կտորներ ձեռքի վրայ շարժել, գերանների կամ պարանների վրայ ճախարակի նման զանազան պտոյտներ գործել, թռիչքներ անել եւ այլն: Դրանք շատ հարկաւոր բաներ են, մանաւանդ մեր լեռների մէջ եւ մեր